

ԹԻԻ 7



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ



ՎԵՐԲԱՑՈՒՄ 1911 - 12 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ Է.

1 Յուլիս 1911



Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. — ՕՍԲ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

Պապը Ալի Էպիսկոպոս հասկսի Թիւ 27

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

- | | | | | |
|----|----------------|----------|----------|---|
| 1. | Եղեիկ Ս. Եպիս. | Ապահովել | * | |
| 2. | Ղեւոնդ Ծ. Վրդ. | Դուրեան | * | |
| 3. | Դէորդ | Քաճ. | Պաշտպան | * |
| 4. | Տրդատ | » | Պօյաճեան | * |

(Բ. Վիճակ)

- | | | | |
|----|----------------|---------|---------|
| 5. | Դրիգորիս Ծ. Վ. | Պաշտպան | |
| 6. | Աբել | Քաճ. | Երէցեան |
| 7. | Սուքիաս | » | Պաշտպան |
| 8. | | | |

((Գ. Վիճակ)

- | | | | |
|-----|-------------------|-----------|--|
| 9. | Հմայեակ Արքեպիսկ. | Դիմաքսեան | |
| 10. | Մաղաքիա Եպիսկ. | Տէրունեան | |
| 11. | | | |
| 12. | | | |

(Դ. Վիճակ)

- | | | | |
|-----|-------------------|-----------|--------------|
| 13. | Արիստակէս Ա. Քաճ. | Ճիգմէճեան | |
| 14. | Խորէն | » | Յարութիւնեան |
| 15. | Յուսիկ | » | Քաջունի |
| 16. | Տաճատ | » | Փաշաեան |

(Ե. Վիճակ)

- | | | | |
|-----|------------|--------------|-----------|
| 17. | Գնէլ Ծ. Վ. | Դալէմբեարեան | |
| 18. | Հմայեակ | Քաճ. | Էքսէրճեան |
| 19. | Մէքայէլ | » | Աշճեան |
| 20. | | | |

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

- | | | | |
|-----|---------------|---------------|------------------|
| 21. | Երուանդ Է. Ֆ. | Էլուպ Ս. Եղիս | Տէր-Անդրէասեան * |
|-----|---------------|---------------|------------------|

Խաւարիկ

- | | | | | |
|-----|--------|-------|-------------|-------|
| 22. | Պետրոս | Է. Ֆ. | Հալաճեան | Բ. Պ. |
| 23. | Սմբատ | » | Քեաթիպեան | |
| 24. | Պետրոս | » | Խօրասանճեան | |

Մաքրի-գիւղ

- | | | | | |
|-----|----------|-------|-----------|-------|
| 25. | Երուանդ | Է. Ֆ. | Պէյազճեան | |
| 26. | Թաղաւոր | » | Արեւեան | |
| 27. | Տօքթ. Լ. | | Մալխասեան | |
| 28. | Յակոբ | Է. Ֆ. | Պօյաճեան | Բ. Պ. |
| 29. | Յակոբ | » | Փափազեան | |
| 30. | | | | |
| 31. | | | | |

Պէյլիսէրէ

- | | | | | |
|-----|--------|-------|------------|--|
| 32. | Արշակ | Է. Ֆ. | Ալպօյաճեան | |
| 33. | Յովսէփ | » | Դաղազեան | |

Բ. Բացակայութիւն առաջին :

Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :

Բ. 3 Բացակայութիւն երրորդ :

Բ. Պ. Բացակայութիւն բանաւոր պատճառաւ :

(*) Մինչեւ ցարդ պաշտօնի վրայ զանազան վիճակաւ դադարեալք :

Սան-Սրբաճաճ

Օրթաղիկ

- | | | | |
|-----|--------------|-------|----------|
| 34. | | | |
| 35. | Խաչիկ | Է. Ֆ. | Սրբաճեան |
| 36. | Տօքթ. Ստեփան | » | Թէրզեան |

(Բ Վիճակ)

Բերա-Գարսի-Վաշա

- | | | | | |
|-----|-------------|-------|--------------|-------|
| 37. | Արամ | Է. Ֆ. | Հալաճեան | Բ. Պ. |
| 38. | Խնդիր | » | Սիմոնեան | |
| 39. | Մանուկ | » | Ազարեան | Բ. Պ. |
| 40. | Մինաս | » | Զեբազ | Բ. Պ. |
| 41. | Յակոբ | » | Էսաեան | |
| 42. | Ստեփան | » | Գարսեան | Բ. Պ. |
| 43. | Տօք. Վահրամ | » | Թորգոմեան | |
| 44. | Տիբան | » | Կիւմիւշիկեան | |
| 45. | | | | |

Գարսի - Գնալը

- | | | | | |
|-----|----|-------|----------|--|
| 46. | Ա. | Է. Ֆ. | Վառաճեան | |
|-----|----|-------|----------|--|

Գուրուշէճ

- | | | | | |
|-----|--------|-------|-----------|--|
| 47. | Միհրան | Է. Ֆ. | Մուրատեան | |
|-----|--------|-------|-----------|--|

Պէլիքաւ

- | | | | | |
|-----|---------|-------|---------|--|
| 48. | Միհրգատ | Է. Ֆ. | Հայկազն | |
|-----|---------|-------|---------|--|

Ֆէրիկիւղ

- | | | | | |
|-----|---------|-------|-------------|----|
| 49. | Եղուարդ | Է. Ֆ. | Գարսիէօղեան | |
| 50. | Հրանտ | » | Ասատուր | |
| 51. | Մարկոս | » | Նաթանեան | |
| 52. | Յակոբ | » | Պահրի | Բ. |

(Գ Վիճակ)

Գարսի-գիւղ

- | | | | | |
|-----|---------|-------|-----------|--|
| 53. | Աղասի | Է. Ֆ. | Աղասեան | |
| 54. | Եղուարդ | » | Շիրինեան | |
| 55. | Միհրան | » | Շիրինեան | |
| 56. | Ներսէս | » | Օհանեան | |
| 57. | Սարգիս | » | Լամբրեան | |
| 58. | Սերովէ | » | Պէրպէրեան | |
| 59. | | | | |

Եւնի-գարու

- | | | | | |
|-----|--|--|--|--|
| 50. | | | | |
| 61. | | | | |

Պալար

- | | | | | |
|-----|---------------|-------|----------|--|
| 62. | Տօքթ. Կարապետ | Է. Ֆ. | Եսայեան | |
| 63. | Հեթում | » | Սէթեան | |
| 64. | Յարութիւն | » | Մոսիսեան | |
| 65. | Ստեփան | » | Թեղեան | |

Սիլիսար Եւնի մահալի

- | | | | | |
|-----|---------|-------|-----------|--|
| 66. | Թորգոմ | Է. Ֆ. | Պօյաճեան | |
| 67. | Հմայեակ | » | Խոսրովեան | |
| 68. | Վահան | » | Սուրենեան | |

(Դ Վիճակ)

Գուր-գարու, Գուր-գարուի դուռ

- | | | | | |
|-----|---------------|-------|---------------|-------|
| 69. | Դաւիթ | Է. Ֆ. | Տէր-Մովսէսեան | |
| 70. | Տօքթ. Կարապետ | » | Մուրադեան | |
| 71. | Հմայեակ | » | Պօյաճեան | Բ. Պ. |
| 72. | Սարգիս | » | Սուրեն | |

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1911-1912 ՆԱՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ Է.

1 ՅՈՒԼԻՍ 1911, ՈՒՐԲԱԹ

ՆԱԽԱԳԱՀ. — Տեղապահ Տ. ՎԱՀՐԱՄ Արեւիկի. ՄԱՆԿՈՒՆԻ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՀՐԱՆՏ Է. ՄԱՍՏՈՒՐ

ՕՐԱԿԱՐԳ

1. — Առաջարկութիւն ի մասին օրակարգի խնդրոց:
2. — Ընտրութիւն պատգամաւորաց ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան մասնակցելու համար:

ԲԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

Տեղապահ Ս. ր աղօթքով բացաւ ասեանը ժամը 3ին ի ներկայութեան 45 երեսփոխանաց, որոնց թիւը յանդեցաւ 55ի:

ԲԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՈՅ

ԱՏԵՆԱՊԵՏ Է. — Տօքթ. Թէրզեան Է. Ֆ. անհանգստութեան, Յ. Շահրիկեան Է. Ֆ. Խնդէս Կ. Պօյաճեան Է. Ֆ. ճամբորդութեան պատճառաւ բացակայ կը զըտ-

նուին և զբաւորապէս հաղորդած են զայս Դիւանին. Կ'արձանագրենք զիրենք իրեն օրինաւոր բացակայ:

Իրաւասութեան դիւանը աստեանապետ ընտրած է Գրիգորիս Վ. Պաշտպան, իսկ ասեանադպիր տօքթ. Թէրզեան Է. Ֆ. յոյնպէս ձեռնհասութեան դիւանը աստեանապետ ընտրած է Տ. Մաղաքիա Եպիսկ., իսկ աստեանադպիր Միլքան Կիւրճեան Է. Ֆ. Փափաքելի է որ միւս դիւաններն ալ իրենց կազմակերպութիւնը ստանան, որպէս զի Աստեանապետաց Դիւան ունենանք և ձեռնարկուի քննելու այն

խնդիրները որոնք իրեն պիտի հաղորդուին :
 Ելմտից յանձնախումբն ալ կազմուած է
 հետեւեալ կերպով . Մ . Հայկազն էֆ . ատենա-
 պետ , Ե . Պէյազեան էֆ . ատենադպիր , Թ .
 Պոյաճեան էֆ . գանձապետ , Ա . Սարգսիեան
 էֆ . մատակարար :



ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԳԻՐԸ Ի ՄԱՍԻՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԺԱՆ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ազգ . Վարչութիւնը
 պաշտօնագիր մը ունի , Երուսաղէմի պատ-
 րիարքական ընտրութեան ստիպողութեանը
 մասին երկու երեսօխոսաններու կողմէ անց-
 եալ նիստին եղած հարցման ի պատասխան .
 խօսքը Ատենադպիր Էֆէնտիինն է , կարդալու
 համար այդ պաշտօնագիրը :

Ազնուաշուք Ատենապետ Էֆէնտի

Ազգային Երեսօխոսանական Ժողովոյ
 Մայր Դիւանիդ կողմէ Ազգ . Վարչու-
 թեան նկատաւման յանձնուած էր Երեսօխ-
 օսան Գասպարեան Արիստակէս և Փափազ-
 եան Պարզե Էֆէնտիներու մէկ առաջարկն ,
 որով կը խնդրուէր ստիպողութիւն տալ
 Երուսաղէմի Պատրիարքական ընտրութեան :
 Խնդիրը գտնուելով արդէն Ազգ . Վարչու-
 թեան սեղանին վրայ , Խառն Ժողովը տեղե-
 կանալէ ետք իրաց վիճակին՝ որ կը տրիէ
 Սրբոց Յակովբեանց Վանուց մէջ , խորհրդ-
 զակցեցաւ այն միջոցներուն վրայ , զորս ան-
 հրաժեշտ էր ձեռք առնուլ վանական կարգն
 ու կանոնն անվթար պահելու և ելեմտից
 մատակարարութեան ճիւղը օրինաւոր անսե-
 սութեամբ հիմնապէս բարեկարգելու համար ,
 և որոշեց նախ հրահանգ ուղղել Երուսաղէմի
 Գեր . Պատրիարքական Տեղապահին , որպէս
 զի Ազգային Ժողովին կողմէ 1838 ին վաւե-
 րացուած միաբանական կանոնագրին , որ տի-
 րող օրէնք կը մնայ ցարդ , արամադրութեանց
 համաձայն ձեռնարկէ կարեւոր նախապատ-
 րաստութեանց Պատրիարքական ընտրելոաց
 ցանկը կազմելու համար , և միանգամայն

Սրբազան Տեղապահին խնդրանաց վրայ՝
 հարկ դատեց վարչական պատուիրակ մը յու-
 ղարկել , որպէս զի աջակցի Նորին Գերա-
 պատուութեան ընտրական այս գործողու-
 թեանց մէջ : Իսկ զալով ելեմտից ճիւղին
 բարեկարգութեան՝ Խառն Ժողովը արժան
 դատեց Կեդրոնական Վարչութեան անմիջա-
 կան հսկակչութիւն ներքե առժամեայ կերպով
 աշխարհական ելեմտից Տեսուչ մը յուղարկել ,
 որ պաշտօն ունենայ՝ գործակցութեամբ
 Պատրիարքական Տեղապահ՝ Սրբազանին ,
 ձեռք առնուլ վանքին մատակարարութիւնն ,
 և Նորին Սրբազանութեան միջոցաւ համա-
 րաստ լինիլ առ Կեդրոնական Վարչութիւն :

Ի դիմաց Խառն Ժողովոյ

Ազգ . Կեդր . Վարչութեան

Կրօնական Ժողովոյ Ատենապետ


ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊ . ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Քաղաքական Ժողովոյ Ատենապետ

ԳԷՈՐԳ . ԱՍԼԱՆԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Այս գիրը ի գիտու-
 թիւն Ժողովիդ հաղորդուելէ յետոյ , կ'ար-
 ձանագրուի .

ՋԱՅՆԵՐ . — Շատ լաւ :



ԱՌԱՋԱՐԿ ՊԱՏՐԻԱՐԺԱՆԻ

ՊԻՏՃԷԻ ՄԱՍԻՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ա . Ալպոյաճեան էֆ .
 առաջարկ մը ունի Պատրիարքարանի պիտ-
 ճէի մասին :

(Ատենադպիր Էֆ . կարդաց հետեւեալ
 գիրը) .

Ազնուաշուք Ատենապետ Էֆ .

Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Տպագրեալ ներկայ չրջանի Ա . Նիստի տոնե-
 նագրութեան մէջ Տեղապահ Ս . Նախագ ա-
 ճական ճառին եղրակացութեան մէջ ի մէջ
 այլոց հետեւեալ առաջարկները կային (էջ 164) .
 Ա . Պահանջել վարչութեանն որ անմիջա-

պէս ներկայացնէ 1911 տարւոյ պատրիար-
 քարանի ելմտացոյցը , անցեալ տարիներու
 պիւտճէներու յարակից ազգային տուրքի և
 այլ առաջարկութիւններով :

Բ . Անմիջապէս վարչութեան միջոցաւ պա-
 հանջել Երուսաղէմի պակաս մնացած մատա-
 կարարութեան հաշիւները և 1911 տարւոյ
 պիւտճէն :

Այդ թուականէն ի վեր երկու ամիսներ
 ևս սահած են և տարւոյն 6 ամիսները ան-
 ցած են և դեռ 1911 տարւոյ ելմտացոյցը
 Ժողովիս չէ բերուած և Երուսաղէմէն այս
 մասին նոյն իսկ տեղեկութիւն մը չէ հասած :

Այս երրորդ տարին է Ազգ . Ժողովոյ վե-
 րաբացումէն յետոյ որ կանցնի առանց կ'ա-
 տարուելու ելմտացոյցի քննութիւնը որ ըստ
 սահմանադրութեան 61 րդ յօդուածին Ազգ .
 երեսի . Ժողովոյ առաջին և ամենաստիպո-
 ղական պարտաւորութիւնն է և օրակարգի
 միակ խնդիրն է որ չկրնար յետաձգուիլ :

Հետեւաբար կառավարկեմ ստիպողաբար
 պահանջել վարչութեանն որ շուտով ներկա-
 յացնէ 1911 ի ելմտացոյցը և անմիջապէս հրա-
 հանգ տայ Երուսաղէմ ներկայացնելու համար
 վանքին ելեմտացոյցը :

Ելեմտացոյցի քննութիւնը պարզ թուա-
 նշաններու քննութիւն մը չէ , այլ Պատրիար-
 քարանի ներքին բարեկարգութեան և այլ
 ազգային խնդիրներու բանալին է և ասոնք
 անյետաձգելի պահանջներ դարձած են :

Մնամ յարգանք

ԱՐՇԱԿ ԱԼՊՅԱՆՆԵԱՆ

1 Յուլիս 1911

Կ . Պօլիս

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ըստ օրինի այս ա-
 ռաջարկը կը խրկուի Վարչութեան :

ԱՐՇԱԿ ԷՖ . ԱԼՊՅԱՆՆԵԱՆ . — Եթէ այս
 գիրն ալ միւս շատ մը գիրերուն պէս Վար-
 չութեան պիտի յղուի անպատասխանի մնա-
 լու համար , գերեզման զրկելու նշանակու-
 թիւնը միայն պիտի ունենայ : Ինչպէս ըսած
 եմ , ելեմտացոյցի խնդիրը լոկ թուանշաններ
 քննելու խնդիր մը չէ , այլ Պատրիարքա-
 րանի վերակազմութեան խնդիրն ևս անոր

կցուած է և այս պէտքը շատ անհրաժեշտ
 դարձած է : Երեսուն տարի է որ Ազգը կը
 գտնուի պետական անկարող և իրենց պաշ-
 տօնին անգիտակ պաշտօնեաներէ և կ'պա-
 հանջէ պետական գործերու մէջ բարեկար-
 գութիւն , մինչ մեր տունը՝ կանոնաւոր և
 բարեկարգ չէ : Թերեւ շատեր չեն գիտեր թէ
 Պատրիարքարանի գործերը բարեկարգ վիճակ
 մը ունենալէ շատ հեռի են և վերակազմու-
 թիւնը շատ անհրաժեշտ դարձած է և ստի-
 պողական : Առանց այս Ժողովին գիտու-
 թեան Պատրիարքարանի մէջ չարունակ նոր
 երկրորդական պաշտօնեաներ կ'առնուին ,
 մինչ իրական պէտքը գլխաւորներու փոփո-
 խութեան մէջն է և չի կատարուիր : Անոնցմէ
 ոմանք ֆիզիքական պատճառներով կամ
 տարիքի բերմամբ բարեւոք ծառայութենէ մը
 յետոյ հանգստեան կոչուելու պէտք ունին ,
 զի անընդունակ են այլեւս աշխատելու : Հան-
 զըստեան կոչուելը նախատինք մը չէ , այլ
 պատիւ մը : Այս վերակազմութեան պէտքը
 զգացած էր նախորդ վարչութիւնն և Յանձ-
 նաժողով մը կազմած , որ էր իր ծրագիրը
 տուած է : Նոր Վարչութիւնը , որուն մէջ այն
 Յանձնաժողովին անդամներէն ալ կը գրա-
 նուին՝ այս ծրագիրն իր օրակարգն անցու-
 ցած էր և հաղիւ զայն քննած մէկ կողմ
 թողած է , մինչդեռ անյետաձգելի էր : Հե-
 տեւաբար կը պահանջեմ որ ստիպողաբար ելե-
 մտացոյցն հոս բերուի :

ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ . ՊԱԼԱՔԵԱՆ — Երկու
 դիտողութիւն ունիմ : Յանուն Վարչութեան
 կ'յայտնեմ թէ նախորդ Քաղաք . Ժողովին
 քննութեան առած ծրագիրը մէկ կողմ չէ
 թողուած այլ անոր նկատաւումը յետադա-
 ուած՝ Հարստահարութեանց խնդրոյն համար
 կազմուելիք տեղեկագրին պատրաստութեան :
 Իսկ ելեմտացոյցի մինչև հիմա չգալուն պա-
 տասխանատուն ներկայ Վարչութիւնը չէ որ
 դեռ նոր ընտրուած է : Նախորդ տարւոյ
 ելեմտացոյցը բերուած էր , սակայն յե-
 տոյ խնդիրները վրայ հասան և անիշխա-
 նութեան չրջանի մէջ կարելի չեղաւ քննու-
 թեան առնել : Նոյնպէս Ալպոյաճեան էֆ .
 իրաւունք չունի հարցումներու գերեզ-
 ման անուանելու Վարչութիւնը , որուն եղած
 ու է հարցում անպատասխանի չէ մնացած :
ԱՐՇԱԿ ԷՖ . ԱԼՊՅԱՆՆԵԱՆ . — Տակա-

էին նոր էք: Ձեր նախորդներուն զրկուած տանկներով թուղթեր կան, որոնք անպատասխանի մնացած են, կրնամ տանկա-նադրութիւններով հաստատել:

Հ. ԱՌԱՄԱՆՅԱՆ ԷՖ. — Աւարտածեան էֆ. իրարու յաջորդող վարչութեանց կը վերադարձնէր պատասխանատուութիւնը, բայց ոչ արդի և ոչ նախկին վարչութիւնը, ու է պատասխանատուութիւն ունին: Պէտք է գիտնալ թէ նախորդ վարչութիւնը, նոյնպէս Գաւառեան վարչութիւնը եւ մտայնօրէն ներկայացուցին և ամբաներով օրակարգին վրայ պահուելէ յետոյ, այս Ժողովը տարւոյն վերջը իրր ընդունուած վաւերացնելով ուղեց փրկել իր պատիւը: Եթէ Ազգ. Ժողովը իր պարտքին զիտակցութիւնը չէ ունեցած և չէ զբաղեր, ի՞նչ ընէ վարչութիւնը: Գաղով Երուսաղէմի պիւտճէին, անոր համար վարչութիւնները պատասխանատու չեն: Ազգ. Ժողովը պէտք է ինք պահանջէ միարտնութեանէն Երուսաղէմի եւ մտայնօրէն, եթէ օրէնքները իրենց գոյութեան իրաւունքը պահեր են:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն երբեք չեմ կրնայի թէ ինչ որ կը վերաբերի Պատրիարքարանի, վարչութեան պէտք է յղել, իսկ երուսաղէմի պատկանածը, կ'որոշուի ուղղակի Երուսաղէմի վարչութեանէն:

ՉԱՅՆԵՐ. — Կարելի չէ, պէտք է վարչութեան միջոցաւ ուղարկի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն առաջարկը իր ամբողջութեամբ վարչութեան կը յղենք:

Ա. ԱՂՊՅԱՆ ԷՖ. — Ստիպողութեան հանգամանքով:



ՀԱՐՑՈՒՄ ՉԱՐԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴՐՈՅՆ ՆԿԱՏԱՐԱՐ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հմայեալ Ս. առաջարկ մը ունի Չարանճագի հողային խնդրոյն նկատմամբ:

(Ատենադպիր էֆ. կարգաց հետեւել առաջարկը)

Ազնուաշուք Ատենադպր էֆենտի

Ազգային Երեսօրթանական Ժողովոյ

Լրագիրներէն կը անդեկանանք թէ՛ Չարանճագի հողագործ հայ Ժողովուրդն իր կարեւոր հողային սեփականութիւններուն դէմ Քիւրտ պէյերու կողմէն ի գործ դրուած բռնի յափշտակութիւններուն և ոտնձգութիւններուն համար՝ երկար տարիէ ի վեր Սահմանադրական կառավարութեան մօտ թէ՛ Ազգ. Պատրիարքարանի և թէ՛ իրենց կողմանէ կատարուած բազմաթիւ դիմումներուն ապարդիւն մնալէն բոլորովին յուսահատ ուստադաւանութեան զիմած ըլլան:

Չարանճագի հայ Ժողովուրդեան, իր յուսահատ կացութենէն այս տեսակ ազգամիջադիմումի մը լուրն՝ ամէն հայ սիրտերու խորապէս ցաւ պատճառած է, որովհետեւ եթէ զժողովարար այս լուրը հաստատուի՝ ան առեն Ազգին իր ծոցէն՝ 20,000ի մօտ անհատներ պիտի կորսնցունէ:

Արդ՝ կ'ուզենք խմանալ թէ՛ ստոյգ է Չարանճագի Հայոց ուստադաւանութեան դիմումը բրած ըլլալին: Ազգ. վարչութիւնն ի՞նչ տեղեկութիւն ունի, և թէ ի՞նչ միջոցներ ձեռք առած է:

Յայտ է թէ՛ Օսմանեան Սահմանադրական կառավարութիւնը դեռ իր հին ընթացքը կը շարունակէ, «և Խարբերդի կառավարութիւնը առկալին որ և է լուր չունի եղբոր Չարանճագի Քիւրտ Պէյերու ոտնձգութիւններէն, ուստի եղած զանգատներն ալ անհիմն են եղեր» առաւօտեան թերթերու մէջ այս զարմանալի հրատարակութիւնը կարդացինք Իսթիսպարէքէն հաղորդուած:

Ազգայնաբար

Հնայեակ Եպ. Դիմախնեան

Բերա 1 Յուլիս 1911

Տ. ՀՄԱՅԵԱԿ ԵՊԻՍԿ. ԴԻՄԱՔՍԵԱՆ. — Իրր առաջարկի տէր երկու խօսք ընել կ'ուզեմ: Չեմ գիտեր թէ ինչ պատճառ կար որ հայաբնակ աշխարհի հարստահարութեան խնդիրը բոլորովին օրակարգէն վերցուեր է:

ՎԱԽԵՐԱՑՈՒՄ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ նստաշրջանի Ա. և Բ. նիստերու առեւտագրութիւնները միայն վաւերացուած են, հետեւաբար Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. և Թ. նիստերու առեւտագրութիւնները, ինչպէս նաեւ ներկայ նստաշրջանի Ա. Բ. և Գ. նիստերու առեւտագրութիւնները Ձեր վաւերացման կ'ենթարկեմ:

Հ. ԱՐԱՄԵԱՆՑ ԷՖ. — Ընդհանուր դիտողութիւն մը ունիմ առեւտագրութեան նկատմամբ: Տնտեսագիտական նպատակով պէտք է ըլլայ, որ առեւտագրութեան խմբագրութիւնը մէկ մարդու միջոցաւ տեղի կ'ունենայ, բայց հարկ չկայ ըսելու որ քարտուղարի մը յիշողութիւնը որքան ալ սուր ըլլայ, չկրնար պէտք եղած կերպով նօթագրել այն կարեւոր խորհրդակցութիւնները, որոնք ստիպողական խնդիրներու շուրջը տեղի կ'ունենան: Ես կը տեսնեմ որ իմ խօսածներէն զանցառութեան կը արուին ինչ ինչ կէտեր: Ուստի ասոր առաջը առնելու համար Դիւանը պէտք է ընէ այն, ինչ որ կարեւոր կը նկատէ և պէտք է միջոցներ գործադրէ, մէկ կողմ դնելով անտեսական հաշիւները: Ես առայժմ չեմ կրնար մի առ մի յիշել զեղջուած խօսքերը, պակաս մնացած բառերը և անոնցմէ յառաջ եկած անիմաստ խօսքերը որոնք առկաւթիւ չեն, ուստի նիստին մէջ եղած խօսքերը ճշդիւ սղադրուելու կարեւոր պահանջին բաւարարութիւն տալու համար պէտք է որ օժանդակ քարտուղար մ'ալ նշանակուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր ո՞ր խօսքերն են որ մոռցուած են. եթէ յիշեցնէք, կ'աւելցնենք:

Մ. ԿԻՒՐՃԵԱՆ ԷՖ. — Ասկէ առաջ որոշուած էր որ նախորդ նիստերու առեւտագրութիւններուն նախապատուութիւն արուի և հիներն ալ հետզհետէ ապագրուին: Ես կը փափաքէի որ այս որոշումը գործադրուէր և միշտ առձեռն ունենայինք նախորդ նիստի առեւտագրութիւնը որ միտքերու մէջ թարմ ըլլալով, շուտով կրնայ սրբագրուիլ:

Ա. ՎՌԱՄԵԱՆ ԷՖ. — Ես ալ գիտեմ պիտի տամ որ առեւտագրութիւնները ընդհանրապէս անխնամ կազմուած կ'ըլլան, շատ անգամ թերթերը աւելի լուր կ'ամփոփեն

մինչդեռ օրէ օր կը յաճախեն դէպքերն և փոխանցիկ հանգամանք մը կ'ստանան: Օր մը Սամսոնէն ուրիշ օր մը Խօսքիւղէն արձագանդ գտնելով, ու տագնապեցնելով Ժողովուրդը: Մենք կը կարծենք որ երբ խնդիր մը վարչութեան յղուի կը վերջանայ: Հայ Ժողովուրդին դաւաճող սողին օսմանեան դրօշին տակ արիւն կը թափէ, մինչ անդին հարստահարութիւնը կը շարունակուի և 20000 հոգի ուստադաւանութեան կը դիմեն: Արդեօք վարչութիւնը պէտք եղած միջոցները խորհած է, և ի՞նչ միջոցներ ձեռք առնուած են:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ի պատասխանի Ձեր Սրբաշնութեան, դիտել կուտամ թէ հարստահարութեան խնդիրը օրակարգէն վերցած չէ, այլ վարչութեան յղուած ըլլալուն համար, անոր պատասխանին կ'սպասուի:

Ա. ՖՆՏԳԼԵԱՆ ԷՖ. — Վարչութիւնը այս խնդիրը նկատի առած և կազմած է յիշատակագիր մը, զոր յաջորդ նիստին պիտի ներկայացնէ, Հոն պիտի տեսնէք Չարանճագի համար ալ ձեռք առած միջոցները, ուստի հիմա բան մը չենք կրնար ըսել:

Տ. ՀՄԱՅԵԱԿ Ս. — Վարչութիւնը կրնայ պատասխանել գոնէ թէ ճիշդ են առնուած լուրերը:

Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ՎՐԴ. — Վարչութիւնը ինկատի առած է խնդիրը և խիստ կերպով բողբած է: Տեղապահ Ս նա ալ յանուն վարչութեան շատ ազդու կերպով դիմում ըրաւ, ապա այն առայժմ չենք կրնար տեղեկութիւն տալ, կանխաձեռն համարելով:

Հ. ԱՐԱՄԵԱՆՑ ԷՖ. — Վարչութեան տուած բացատրութիւնը բաւական է, երբ վարչութիւն մը յաջորդ նիստին կը խոստանայ լերել մեզ իր ծրարիրը չի՛ վայել որ բռնադատենք զինքը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն խնդիրը փակուած կը համարինք:

խոսքերը: Իմ խոսքերուն մէջ սխալ տողաբանութիւնները մի առ մի չեմ կրնար յիշել, միայն միտքս կուգայ որ 29 տարի ընդ միմեանս մէջ, Հասան Պէյլիի եկեղեցւոյ քանդման վիճարանութեան առթիւ, ես պատասխանած ըլլամ Հմայեակ Ս. ի թէ լրագրիւնները չխօսեցան այդ մասին մինչդեռ հակառակն է ճիշդը: Փափաքելէր որ ամէն երեսփոխան անգամ մը իր խոսածը տեսնայ տղաբուռեղէ առաջ:

Տ. ՀՄԱՅԵԱԿ Ս. — Վաւերացման ենթարկուած տառնագրութեան մէջ ստույգ խօսք մը դրուած է իմ բերանս Հասան պէյլիի եկեղեցւոյ քանդման վիճարանութեան առթիւ: «Անոնք որ բողոքողներ էին, հիմա կը հառաչեն»: Այս բացատրութիւնը անիմաստ է, պիտի ըլլայ ստույգ. «Անոնք որ ասկէ առաջ բողոքողներ էին, հիմա զգուշաւորութեան յորդորներ կը կարգան»: Ուրիշ տեղ մ'ալ 1876ի Օսմ. խորհրդարանին խօսքը ըլլալու առթիւ ըսած էի. «Այդ նիստին մէջ օսմանեան թուրք երեսփոխանները հարստահարութեանց մասին եղած բողոքներուն, միտցած են Հայոց հետ»: այդ խօսքն ալ պակասաւոր կերպով նշանակուած է. կը խնդրեմ որ ուղղուի:

Մ. ՀՍԵՅԱՆ ԷՖ. — Ըստ կանոնի, պէտք է որ տառնագրութիւնները յաջորդ. նիստին 24 ժամ առաջ ցրուին. հետեւորդ մէկ հոգիով զլուսն չկրնար ելլել այս գործը: Պէտք է վարչութեան իմացնել այս պարագան:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր դիտողութիւնները Դիւանոս նկատողութեան կ'առնէ եւ ինչ որ կարելի է կը գործադրէ: Քանի որ տառնագրութեանց մասին ուրիշ դիտողութիւն ընող չկայ, ուրեմն Ձեր վաւերացման կ'ենթարկեմ անցեալ չրջանի Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. եւ ներկայ չրջանի Ա. եւ Բ. նիստերուն տառնագրութիւնները:

(Ժողովը ձեռամբարձ հաւանութեամբ վաւերացուց այս նիստերու տառնագրութիւնները):

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ
ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գաղափարան էֆ. Սահմանադրութեան 14 կէտերու վերաքննութեան առթիւ ծրագիր մը բերած է: Այդ ծրագրին կցուած նամակը կը կարգանք եւ տառնագրութեան մէջ կ'անցնենք, իսկ ծրագիրը կը յղենք Նախաձեռնութեան Դիւանին, որուն խրկուած է արդէն Ձոհրապ էֆ. ի առաջարկը:

(Ատենագիր էֆ. ին կարգաց հետեւեալ նամակը.)

ԱՌԱՋԱՐԿ Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. Ի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ս. Գաղափարան էֆ. առաջարկութիւն մը ունի որ պիտի կարգացուի:

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. Ի կարգաց հետեւեալ.

Վաւերացուք

Ատենագրեալ էֆէնտի

Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Ընդ գրոյս՝ Պատկ. Ժողովիդ կը մատուցանեմ Ազգային Սահմանադրութեան տառնագրութիւնը եւ չորս յօդուածներու բարեփոխման ծրագիրը մը եւ յարակից՝ պատճառաբանեալ բացատրական գիր մը, խնդրելով որ Ազգ. Ժողովք բարեհաճի՝ ի նկատ առնուել Ազգային Սահմանադրութեան՝ մասնակի վերաքննութեան անհրաժեշտ պէտքն ու ստիպողականութիւնը, եւ յղել խնդիրը Ատենագրեալ համագումար Դիւանին, իբրեւ Ազգային խիստ կարեւոր խնդիր, համաձայն ներքին կանոնագրի 13 եւ 57 բորդ յօդուածներու արամադրութեանցը, եւ այն դիւանի կարծիքն առնելէ ետքը՝ գործադրել Ազգ. Սահմանադրութեան 99 բորդ յօդուածին՝ եւ ներքին կանոնագրի 7 բորդ յօդուածին՝ վերջին հատուածին՝ արամադրութիւնները:

Ղալաթիա 21 Յունուար 1911

Ազգ. Երեսփոխան

Ա. Յ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Յ. Գ. — Ծրագիրս հինգ ամիս առաջ պատրաստած ըլլալով յարմար առիթի մը կ'սպասէի: Արդ նախորդ նիստին՝ վերաքննութեան առթիւ նախաքաջ մ'առնուած եւ անոր նկատառումն ընդունուած ըլլալով, կը փութամ մատուցանել ծրագիրս, խնդրելով որ կցուի Ձոհրապ էֆ. ի առաջարկին եւ յղուի առ այժմ Նախաձեռնութեան Դիւանին, ի նախաքննութիւն:

1 Յուլիս 1911

Ժողովը որոշեց յղել Նախաձեռնութեան Դիւանին՝ Ձոհրապ էֆէնտիի առաջարկին կցելով:

~~~~~

**ԱՌԱՋԱՐԿ Հ. ՍԵԹԵԱՆ ԷՖ. Ի**

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Հերթում էֆ. Սեթեան նամակ մը ունի, զոր Ձեր նկատողութեան կը յանձնեմ:

Ատենագիր էֆ. կարգաց հետեւեալ գիրը.

Ազնուաշուք Ատենագրեալ էֆէնտի

Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Խղճի եւ միտքամայն արդարութեան պարագ մը կատարելու համար կուգամ առաջարկել Պատկառելի Ժողովիդ, որպէսզի հաճի փութացնել քննութեան գործը նախկին Պատրիարք Օրմանեան Սրբազանի եւ որ առաջ արձակել վճիռը անոր յանցապարտութեան կամ արդարութեան, վերջ տալու այն կախակայեալ դրութեան որուն մէջ կը գրանուի նախկին Պատրիարքը: Արդարութիւնն է տարիներով կղզիացած վիճակի մէջ պահել բարձրաստիճան եկեղեցական մը:

Յուսալով թէ Պատկառելի Ժողովը ուշադրութեան պիտի առնէ ներկայ առաջարկս,

Ազգային Երեսփոխան

1911 Յուլիս 1

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Գիտէք որ ասկէ առաջ, Օրմանեան Ս. ի ամբաստանութեանց

Քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագիրը խրկուեցաւ Ատենագրեալ Դիւանին, որ դեռ չկրցաւ քննել այս խնդիրը: Ատենագրեալ Դիւանը այս պահուս այդ քննութիւնը կատարելու վիճակին մէջ չէ, որովհետեւ նախաքննիչ դիւանները չեն տեղեկագրած ամբողջովին իրենց կազմութիւնը: Պիտի խնդրեմ որ այդ դիւանները իրենց ընտրելով հաղորդեն, որպէս զի կազմուի Ատենագրեալ Դիւանը:

**Ա. ԱԼՊՅԱՆ ԷՖ.** — Կը խնդրեմ որ կարգաք ներքին կանոնագրի այն յօդուածը, որուն արամադրութեան համեմատ, խորհրդարանական յանձնաժողովի մը տեղեկագիրը կրնայ յղուիլ Ատենագրեալ Դիւանին: Ներքին կանոնագրին ո՞ր արամադրութեան համաձայն կատարուած է այդ յօդուածը:

**Վ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ.** — Դուք պէտք է ցոյց տաք այն յօդուածները, որոնք կը ժխտեն այդ որոշումը:

**Ա. ԱԼՊՅԱՆ ԷՖ.** — Ես չկրցայ գտնել ու եւ չյօդուած այդ որոշումը արդարացնող, անոր համար է որ այս հարցումը բրի:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այդ որոշումը քննադատելու համար, պէտք է աչքի առնել ունենալ թէ ինչ հիման վրայ արուեի է այդ որոշումը: Քանի որ հիմայ Ժողովը տրուած որոշում մը ունի եւ Ձեր առաջարկը գրաւոր չէ, բնականաբար չկրնար նկատողութեան առնել եւ դուք իրաւունք չունիք բողոքելու այդ որոշման դէմ:

**Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ.** — Այդ կարգադրութիւնը շատ իրաւամբ եղած է. Ներքին կանոնագրին մէջ արամադրութիւն կայ այդ մասին:

**Ա. ԱԼՊՅԱՆ ԷՖ.** — Ոչ թէ նախկին Պատրիարքի համար սակայն:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այս խնդրոյն վրայ չենք կրնար այլեւս վիճարանութիւն շարուակել: Այսօր օրակարգի չպիտի կրնանք անցնիլ, սակայն օրակարգի խնդիրներու վրայ կրնանք խորհրդակցիլ:

մանաւանդ նախորդ չըջանէն մնացած խնդիրներու վրայ :

Պ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Օրակարգի խնդիրներու խնդրումը առիթ առած է ոմանց կարծեկու թէ կարգ մը խնդիրներ օրակարգէն դուրս հանուած են . մինչդեռ օրակարգը խնդրոց կարգէն ատարելութիւն ունի . մենք այդ երկուքը կը չփոխենք իրարու հետ և երբ կը գտնուին խնդիրներ որոնք օրակարգին մէջ չեն նշանակուած կը կարծուի թէ դուրս ձգուած են : Խնդրոց կարգին մէջ կրնան գտնուիլ 20—30 կարելոր խնդիրներ , զորս Դիւանը առնելով օրուան Ժողովին քննութեան կը ներկայացնէ և այդ խնդիրներն են որ կը կազմեն օրակարգը : Արդ քանի որ օրակարգի խնդրոց վրայ խօսք կ'ըլլայ , լաւ կ'ըլլայ որ հազմուի խնդրոց կարգ մը և հոն նշանակուելով իւրաքանչիւր խնդրոց ինչ ձև տաւ լլալը , ըստ այնմ Ժողովը կազմէ իր օրակարգը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իբրեւ ամբողջացուցիչ տեղեկութիւն , կը հաղորդեմ թէ , առկէ առաջ 1872էն մինչև 1880 , ինչպէս կ'երեւայ ատենագրութեանց մէջ , ամէն տարի դիւանը կը կազմէր խնդրոց կարգը և անոնց իւրաքանչիւրին ինչ լլալը կը բացատրէր և յաջորդ տարուան փոխանցուած խնդիրները կը նշանակէր : Անկէ վերջ չէ չարունակուած այդ աշխատութիւնը : Եթէ Ժողովը կը փափաքի Դիւանը պատրաստ է կազմել խնդրոց կարգը : Արդէն Արիստակէս Էֆ. Գաապարեան զրկած է այս մասին՝ գիր մը , որ Ժողովին ներկայացուած և օրակարգ անցած է :

Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ ԷՖ. — Կաղմուած խնդրոց կարգը պէտք է ընդգրկէ վերջին երեք նստաչըջաններն ալ , և ամբողջական գործ մը ըլլալով , լաւ կ'ըլլայ որ տպագրուի ատենագրութեան յարակից բաժնուի երեսփոխանաց :

Մ. ՀԱՅԱՋԱՆ ԷՖ. — Այս տեղ քանի մը անգամ ծեծուած խնդիր մ'է մեծամասնութեան խնդիրը . կ'առաջարկենք որ Մայր Դիւանը վերստին գրէ Վարչութեան , որպէսզի պակաս իրաւաստիներն ամբողջանան : 38 երեսփոխաններ կը պակսին զանազան տեղերէ թէ Պօլսէն և թէ գաւառներէն , հե-

տեւարար հարկ է որ ստիպողութիւն տալով պահանջուի անոնց ընտրութիւնը :

Ա. ՎՌԱՄԵԱՆ ԷՖ. — Հարցման մը համար խօսք կ'ուզեմ իմ . խօսքս օրակարգի մէջ գտնուած խնդրոց մը կը վերաբերի և քանի որ այդ խնդիրները ընդհանուր կերպով նկատողութեան առարկայ կ'ըլլան իրաւունք կ'ունենամ ես ալ իմ հարցումը ընելու : Առկէ առաջ հրատարակուեցաւ օրակարգ մը Օրմանեան Ս. ի նկատմամբ , որ չմերժուեցաւ իրեն կողմէ : Ես գրաւոր դիտողութիւն մը պիտի ներկայացնեմ , բայց կ'ուզեմ հասկնալ թէ այս խնդրով ո՞վ պիտի զբաղի , խորհրդարանական Յանձնաժողովը թէ Ատենապետաց Դիւանը , և թէ այս խնդիրը ինչ կերպով կրնայ քննութեան առարկայ ըլլալ :

Հ. ԷՖ. ԱՐԱՄԵԱՆՑ. — Ատենապետաց Դիւանը պաշտօն ունի , Քննիչ Յանձնաժողովի պատրաստած տեղեկագրի մասին եղած քննադատութիւնները նկատողութեան առնել , Ատենապետաց Դիւանը նոր խնդրով մ'ալ զբաղելու համար , պէտք է որ այս Ժողովը իւրացնէ ներկայացեալ ու է ամբաստանութիւն , այլապէս Ատենապետաց Դիւանը , չկրնար թերթելու մէջ գրուած յօդուածները նկատողութեան առնել :

Ա. ԷՖ. ՎՌԱՄԵԱՆ ԷՖ. — Որոշ ամբաստանութեան համար է խօսքը :

Հ. ԱՐԱՄԵԱՆՑ ԷՖ. — Քննիչ Յանձնաժողովը , քննեց այն ամբաստանութիւնները , որոնք իրեն եղած էին գրաւոր :

Մ. ԵՊԻՍԿ. ՏԷՐՈՒՆԵԱՆ. — Ես ուրիշ հարցում մը պիտի ընեմ : Խորհրդարանական Յանձնաժողովի անդամներէն անոնք որ Ատենապետաց Դիւանի անդամ են ի՞նչ պիտի ընեն՝ միայն կարծիք պիտի յայտնեն թէ քուէ ալ պիտի կրնան տալ : Այդ կէտը հասկնալ պէտք է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ներքին Կանոնադրին մէջ այդ մասին որոշ տրամադրութիւն չկայ , սակայն երբ մէկը արդէն իսկ կարծիք յայտնեմ է խնդրոց մը համար , տարակոյս չկայ որ միեւնոյն խնդրոց վերստին քննութեան առնելը զարձեալ կարծիք չկարենայ յայտնել , ինչպէս

որ նախադատ ատենի անդամ մը երբ դատի մը համար իր կարծիքը յայտնելէ յետոյ միեւնոյն դատին համար վերաքննութեան դիմում ըլլայ և այդ անդամը նոյն ատեն վերաքննիչ դիւանի անդամակցութեան կոչուած ըլլայ , չկրնար մասնակցիլ արուելիք որոշման :

Հ. ԱՐԱՄԵԱՆՑ ԷՖ. — Մաղաքիս Ս. ի հարցումը կը վերաբերի իր անձին , զի ինքը Քննիչ Յանձնաժողովի անդամ էր , իսկ հիմա պիտի մասնակցի Ատենապետաց Դիւանին : Սակայն ես աւելի դիտելի պարագայ մը ցոյց պիտի տամ , եթէ Քննիչ Յանձնաժողովի անդամ մը քուէ չունի , արդեօք ո՞րքան աւելի իրաւամբ ամբաստանողները պիտի զրկուին իրենց քուէէն և այն ատեն ինքնին կը լուծուի Ատենապետաց Դիւանը , որուն այս խնդիրը յանձնուելուն դէմ բողոքած եմ ժամանակին և յատկապէս այրձանագրել առած , սակայն Ժողովս այն ատեն որոշ հոսանքներէ մղուած տուած է այդ որոշումը : Արդէն տրամաբանութեան հետ չկրնար հաշտուիլ այն կէտը թէ Խորհրդարանական Յանձնաժողով մը որ այս Ժողովին քուէով կազմուած է , բերէ իր տեղեկագիրը և Ժողովը փոխանակ ուղղակի ինքը վիճաբանելու տեղեկագրին վրայ , յղէ ուրիշ յանձնաժողովի մը , որպէս է Ատենապետաց Դիւանը , որուն անդամներէն մեծ մասն ալ լստ օրինի կը կաշկանդուին և կ'արգիլուին մասնակցելէ քուէարկելու իրաւունքէն , ոմանք իբր խորհրդարանական Յանձնաժողովի անդամ և ուրիշներն ալ իբր ամբաստանող : Այս Ժողովը Ատենապետաց Դիւանին կարծիքը կ'ուզէ առնել թէ Օրմանեան Ս. արդար է թէ ոչ , մինչդեռ ատիկա ըսելու միակ իրաւասու մարմինը այս Ժողովն է , այս պարագան է որ ըսինք , բայց չկրնինք լսեցնել դժբաղդաբար և քանի որ առիթը եկած է զարձեալ կը կրկնեմ :

մուած է , բերէ իր տեղեկագիրը և Ժողովը փոխանակ ուղղակի ինքը վիճաբանելու տեղեկագրին վրայ , յղէ ուրիշ յանձնաժողովի մը , որպէս է Ատենապետաց Դիւանը , որուն անդամներէն մեծ մասն ալ լստ օրինի կը կաշկանդուին և կ'արգիլուին մասնակցելէ քուէարկելու իրաւունքէն , ոմանք իբր խորհրդարանական Յանձնաժողովի անդամ և ուրիշներն ալ իբր ամբաստանող : Այս Ժողովը Ատենապետաց Դիւանին կարծիքը կ'ուզէ առնել թէ Օրմանեան Ս. արդար է թէ ոչ , մինչդեռ ատիկա ըսելու միակ իրաւասու մարմինը այս Ժողովն է , այս պարագան է որ ըսինք , բայց չկրնինք լսեցնել դժբաղդաբար և քանի որ առիթը եկած է զարձեալ կը կրկնեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս վիճաբանութիւնը չարունակելը անօգուտ է , որովհետեւ մեծամասնութիւն չկայ , հետեւարար ատենը կը փակենք :

(Ատենապետ Էֆ. ատենը փակեց ժամը 4 ու կէսին)

Ազգ. Ընդհ. Ժողովոյ

Ատենագիր

Ատենապետ

ՕՆՆԻԿ ԶԻՖԹԷ ՍԱՐԲԱՅ

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

- Կէսիկ-փաշա
73. Հմայեակ էֆ. Արամեանց  
74. Յարութիւն » ձանկիւլեան  
75.  
76.  
77.

- Սամաքիա Ս. Գէորգ
78. Բիւզանդ էֆ. Պօղաճեան  
79. Գրիգոր » Զօհրապ Բ. Պ.  
80. Լեւոն » Սաաթճեան  
81. Հայկ » Խօճասարեան  
82. Միլլա » Մսերեան Բ. Պ.  
83. Պարգէ » Փափաղեան  
84. Լեւոն » Սեղրոսեան

(Ե Վիճակ)

- Գուգիուցնուք—Ինասիէ
85. Երուանդ էֆ. Խորասան  
86. Զարեհ » Տիպէր  
87. Լեւոն » Տէմիրճիպաշեան  
88. Ռուբէն » Զարդարեան  
89.

- Թօփ-գափու
90. Դարեգին էֆ. Փաստրմաճեան Բ. Պ.

- Ղալաքիա-Պէյֆօլ
91. Երուանդ էֆ. Օտեան  
92. Վառճապուհ էֆ. Մանուկեան  
93.

- Սամաքիա Ալքսիմէր
- 94.

- Սիլիւսար Ս. Խաչ
95. Բարսեղ էֆ. Աւետիսեան  
96. Դարեգին » Տէմիրճիպաշեան  
97. Հմայեակ » Լաճիկեան Բ. Պ.  
98. Յարութիւն » Շահրիկեան  
99. Վարդգէս » Սէրէնկիւլեան Բ. Պ.  
Բոււնէլի-Կիսար. Պոյանը-գիւղ, Ենի-գիւղ  
100. Աբրահամ էֆ. Տէր-Յակոբեան

ԴԱՆԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՆԱՆԲ

(Ա Վիճակ)

101. Վահան Եգիպտոս էֆ. Թէքեան  
102. Եւդոկիա  
103. Խարբերդ  
104. Կարին Եֆ. Տէր-Աղաբեան Բ. Պ.  
105. Սողոմոն Եֆ. Սիւրին—Մանքիլդ  
106. Միսաք էֆ. Դօչունեան  
107. Դեղամ էֆ. Մուշ  
Տէր-Կարապետեան  
107. Զմեկածագ—Զարաննագ

- Տրապիզոն
108. Մնիկ էֆ. Զիֆթէ Սարա (Բ Վիճակ)

- Ադրամար
109. Ղեւոնդ էֆ. Մեղեան Բալու

110. Մեքոն էֆ. Կիւրճեան Եֆ. Եօզլաս

111. Ստեփան էֆ. Դըպրըզլեան Կեսարիա

112. Վահան էֆ. Էստեան Հալէպ—Այնթապ

113. Արտաշէս էֆ. Ֆնտգլեան Նիկոմիդիա

114. Տօթ. Դրիգոր էֆ. Ճէլալ Պաղսաս

115. Տօթ. Ներսէս էֆ. Թիւրեան

116. Արտաշէս էֆ. Յովսէփեան Բ. Պ.

(Գ Վիճակ)

- Ակն
117. Հայկազուն էֆ. Պէկեան

118. Արթուր էֆ. Արաքիւր

119. Սեպուհ էֆ. Սարաֆեան Եդեսիա

120. Զարմայր էֆ. Իւթիւճեան Զմիւռնիա

121. Տօթ. Տէօփէթ էֆ. Տատրեան Հանրն

122. Տօթ. Տէօփէթ էֆ. Տատրեան Մալաքիա

123. Պանսրմա—Պալքէսիւր

124. Վահան էֆ. Փափաղեան Վան

- (Դ Վիճակ)

- Ադրիանուպոլիս
125. Մնիկ էֆ. Տէրունեան

126. Արիստակէս էֆ. Դասպարեան Ասանա

127. Աղէքսանդր էֆ. Փանոսեան Բաղէ

128. Զարեհ էֆ. Խօրասանճեան Կուսիմ—Ամիօն-Գարա-Հիսար

129. Յակոբ էֆ. Սթամպուլեան Պրուսա

130. Աբրահամ էֆ. Հայրիկեան Ռօսոսթո

131. Տիգրան էֆ. Նազաշեան Տիգրանակերտ

132. Տիւրիկ

(Ե Վիճակ)

- Ամասիա—Մարգուան
133. Յովսէփեան էֆ. Դազանճեան Բ. Պ.

134. Երուանդ էֆ. Բաբերդ Սրմաքէշիանլըեան

|                                                               |                                                                                               |
|---------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------|
| <p>135. Գաղափա</p> <p>Գօնեա</p>                               | <p>Մարաւ—Ձէյրուն</p> <p>138. Սմբատ էֆ. Բիւրատ</p> <p>Շապին-Գարահիսար</p>                      |
| <p>136. Երզնկա</p> <p>137. Գաբրիէլ էֆ. Նորատունկեան Բ. Պ.</p> | <p>139. Մկրտիչ էֆ. Մէլիքեան Բ. Պ.</p> <p>Սեբասիա</p> <p>140. Տօքթ. Նազարէթ էֆ. Տաղաւարեան</p> |

## Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

|                                                                                                 |                                                                                                             |
|-------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>Ա. Ատենապետ, Մանուկ էֆ. Ազարեան</p> <p>Բ. » Հրան » Ասատուր</p> <p>Գ. » Հայկ » Խօհասարեան</p> | <p>Ա. Ատենադպիր, Օննիկ էֆ. Զիմքէ Սարաւ</p> <p>Բ. » Մարկոս էֆ. Նաթանեան</p> <p>Գ. » Զարէն էֆ. Խօրասանեան</p> |
|-------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------|

## ՆԱԽԱԲՆՆԻՉ ԴԻԻԱՆՔ

1. ԶԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ
 

|                                        |                                           |
|----------------------------------------|-------------------------------------------|
| Տէր Մաղափա Եպիսկ. Տէրունեան (Ասենապէս) | Տ. Հմայեակ Արքեպիսկ. Գիմաֆսեան (Ասենապէս) |
| Մելիքն էֆ. Կիւրնեան                    | Սմբատ էֆ. Քեսարիպեան                      |
| Մկրտիչ էֆ. Մէլիքեան                    |                                           |
2. ԴԱՍԻԱԲԱՆԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ
 

|                           |                                         |
|---------------------------|-----------------------------------------|
| Տօգ. Ճէլալ էֆ. (Ասենապէս) | Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) |
| » Լ. Մալխասեան էֆ.        | Վահան էֆ. Թէքէեան                       |
| Մ. Կիւրնեան էֆ.           | Տօգ. Ս. Թէրզեան                         |
3. ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ
 

|                                   |                                         |
|-----------------------------------|-----------------------------------------|
| Արիսակէս էֆ. Գասպարեան (Ասենապէս) | Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) |
| Սեփան էֆ. Թէլիքեան                | Միհրան էֆ. Շիրինեան                     |
| Օննիկ էֆ. Տէրունեան               | Պարգէս էֆ. Փափագեան (Ասենապէս)          |
4. ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ
 

|                               |                                         |
|-------------------------------|-----------------------------------------|
| Յակոբ էֆ. Պոյանեան (Ասենապէս) | Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) |
| Յակոբ էֆ. Փափագեան            | Միհրան էֆ. Շիրինեան                     |
| Խաչիկ էֆ. Սրվանեան            | Պարգէս էֆ. Փափագեան (Ասենապէս)          |
5. ՅԱՐԱՅԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ
 

|                                           |                                         |
|-------------------------------------------|-----------------------------------------|
| Տ. Հմայեակ Արքեպիսկ. Գիմաֆսեան (Ասենապէս) | Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) |
| Սմբատ էֆ. Քեսարիպեան                      | Վահան էֆ. Թէքէեան                       |
|                                           | Տօգ. Ս. Թէրզեան                         |
6. ԻՐԱԽԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ
 

|                                         |                                         |
|-----------------------------------------|-----------------------------------------|
| Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) | Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) |
| Վահան էֆ. Թէքէեան                       | Միհրան էֆ. Շիրինեան                     |
| Տօգ. Ս. Թէրզեան                         | Պարգէս էֆ. Փափագեան (Ասենապէս)          |
7. ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ
 

|                                         |                                         |
|-----------------------------------------|-----------------------------------------|
| Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) | Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) |
| Վահան էֆ. Թէքէեան                       | Միհրան էֆ. Շիրինեան                     |
| Տօգ. Ս. Թէրզեան                         | Պարգէս էֆ. Փափագեան (Ասենապէս)          |
8. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ
 

|                                         |                                         |
|-----------------------------------------|-----------------------------------------|
| Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) | Տ. Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաւեան (Ասենապէս) |
| Վահան էֆ. Թէքէեան                       | Միհրան էֆ. Շիրինեան                     |
| Տօգ. Ս. Թէրզեան                         | Պարգէս էֆ. Փափագեան (Ասենապէս)          |

ԵԼԵԻՄՏԻՑ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԸ

|                     |                     |
|---------------------|---------------------|
| Միհրդաս էֆ. Հայկազն | Սարաւի » Սարաւեան   |
| Արքաւի » Սարաւեան   | Երուանդ » Պէյազնեան |
| Երուանդ » Պէյազնեան | Թորգոմ » Պոյանեան   |

## ԳԻՆ Ի ՂՐՈՒՇ

Սեփականութիւն Ազգ. Սնտուկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յաշկացեալ

Կը ծախուի յ'Ազգ. Խորհրդարան Ղաշաքիոյ